Արձանագրություն

Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարան /Նաիրյան 164/ հանրային լսումների

28 ապրիլի 2025թ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն, օրենքի 03.05.2023 խմբագրում ՀՕ 150), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, 2025 թվականի ապրիլի 28-ին՝ ժամը 10:00-ին, Սևան քաղաքի համայնքապետարում /Նաիրյան 164/ տեղի ունեցավ նախատեսվող գործունեության ՝ ՀՀ Առողջապահության Նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում նոր դիահերձարանի կառուցման նախագծի վերաբերյալ հանրային առաջին քննարկումը:

Հանրային քննարկումներին մասնակիցների ամբողջական ցանկը և ֆոտոնկարները կցվում է Արձանագրությանը:

Հանրային լսումները բացեց Սևանի համայնքապետարանի ներկայացուցիչ Հայկ Ղուկասյանը:

Այնուհետև նախաձեռող կողմից մասնագիտական խորհրդատվություն տրամադրող Ծատուրյան Քոնսալթինգ ընկերության ներկայացուցիչ Արայիկ Ծատուրյանը ներկայացրեց «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նոր դիահերձարանի կառուցման մտադրության մասին:

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մարզային դատաբժշկական փորձաքննությունների բաժնի ներկայացուցիչ Սահակ Ավետիսյանը մանրամասն ներկայացրեց նոր կառույցի տեխնիկական հագեցվածության և ծառայությունների բարելավման հնարավորությունների մասին:

Տեղի ունեցավ քննարկում և շահագրգիռ կողմերին հուզող հարցերի վերաբերյալ ներկայացվեց պարզաբանումներ:

Համայնքի ներկայացուցիչների կողմից հիմնական հարցը վերաբերվում էր նոր դիահերձարանի կառուցման աշխատանքների արագացմանը, քանի որ համայնքի բնակչության համար ներկա պայմանները լուրջ անհարմարություններ են ստեղծում:

Հանրային քննարկման արդյունքում, ազդակիր Սևան համայնքի ներկայացուցիչները համաձայնություն տվեցին «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ - ի կողմից նոր դիահերձարանի նախագծի վերաբերյալ:

Սևանի համայնքի ղեկավար

Սարգիս Մուրադյան _____

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ

Սահակ Ավետիսյան _____

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ

Ք. Սևան 28.04.2025

Անցկացման վայր՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան 164 շենք

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում դիահերձարանի կառուցման նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակով հանրային քննարկում

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն	Կոնտակտային տվյալներ	Ստորագրություն
1	[illegible]	[illegible]	091-99-10-88	
2	[illegible]	[illegible]	056-330-430	
3	[illegible]	[illegible]	077-48-38-13	
4	[illegible]	[illegible]	093476946	
5	[illegible]	[illegible]	094 800 872	
6	[illegible]		077-89-33-23	
7	[illegible]	[illegible]	093-46-90-86	
8	[illegible]	[illegible]	093-888-660	
9	[illegible]	[illegible]	098-333-961	
10				
11				